ԱՎԴ/0021/13/25

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի
ընդհանուր իրավասության դատարան,
նախագահող դատավոր՝ Ս.Հովհաննիսյան

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարան,
նախագահող դատավոր՝ Հ.Պետրոսյան

27 նոյեմբերի 2026 թվական ք.Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան),

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

գրավոր ընթացակարգով քննության առնելով դատապարտյալ Սեդրակ Փայլակի Ղազարյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2026 թվականի փետրվարի 13-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ե.Ավագյանի հատուկ վերանայման վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Վարույթի դատավարական նախապատմությունը.

1. Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2023 թվականի օգոստոսի 10-ի թիվ ԱՎԴ/0016/01/23 դատավճռով Սեդրակ Փայլակի Ղազարյանը 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ նաև ՀՀ գործող քրեական օրենսգիրք) 396–րդ հոդվածի 1-ին մասով դատապարտվել է տուգանքի՝ 544.000 (հինգ հարյուր քառասունչորս հազար) ՀՀ դրամի չափով: Ս.Ղազարյանի նկատմամբ նշանակված տուգանքի վճարումը թույլատրվել է կատարել մաս առ մաս՝ 10 (տասը) ամսվա ընթացքում՝ վճարելով ամսական 54.400 (հիսունչորս հազար չորս հարյուր) ՀՀ դրամ:

2. Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2024 թվականի ապրիլի 22-ի որոշմամբ ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության Արարատի մարզային մարմնի պետ Տ.Գևորգյանի միջնորդությունը՝ դատապարտյալ Ս.Ղազարյանից Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2023 թվականի օգոստոսի 10-ի թիվ ԱՎԴ/0016/01/23 դատավճռով նշանակված՝ 544.000 (հինգ հարյուր քառասունչորս հազար) ՀՀ դրամ տուգանքի չափին համարժեք գույք բռնագանձելու մասին, բավարարվել է:

3. Հարկադիր կատարումն ապահովող ծառայության հարկադիր կատարողի՝ 2024 թվականի սեպտեմբերի 16-ի որոշմամբ՝ թիվ 12311854 կատարողական վարույթն ավարտվել է, կատարողական գործողությունների ընթացքում արգելանք է դրվել Ս.Ղազարյանին պատկանող ********* պետհամարանիշի ավտոմեքենայի վրա, որի նկատմամբ հայտարարվել է հետախուզում, իսկ վերջինիս անվամբ այլ գույք չի հայտնաբերվել:

4. Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2025 թվականի հուլիսի 28-ի որոշմամբ ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության Արարատի մարզային մարմնի պետի միջնորդությունը՝ Ս.Ղազարյանի նկատմամբ

նշանակված 544.000 (հինգ հարյուր քառասունչորս հազար) ՀՀ դրամ տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինելու վերաբերյալ, մերժվել է:

5. Դատախազի հատուկ վերանայման վերաքննիչ բողոքի քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2026 թվականի փետրվարի 13-ի որոշմամբ բողոքը մերժել է, Առաջին ատյանի դատարանի՝ 2025 թվականի հուլիսի 28-ի որոշումը թողել է անփոփոխ:

6. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ե.Ավագյանը ներկայացրել է հատուկ վերանայման վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2026 թվականի մայիսի 25-ի որոշմամբ ընդունվել է վարույթ, և սահմանվել է դատական վարույթի իրականացման գրավոր ընթացակարգ:

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ փաստարկներով.

7. Բողոք բերած անձը փաստարկել է, որ ստորադաս դատարանները թույլ են տվել դատական սխալ՝ նյութական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք ազդել են վարույթի ելքի վրա:

Մասնավորապես՝ սխալ են մեկնաբանվել և կիրառվել ՀՀ քրեական օրենսգրքի 59-րդ, 60-րդ հոդվածների, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 27-րդ հոդվածի դրույթները, ինչպես նաև դատական ակտի պատճառաբանությունները հակասում են Վճռաբեկ դատարանի՝ *Գարուն Ասրյանի* գործով 2023 թվականի հունիսի 30-ի թիվ ՍԴ/0006/13/22 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներին:

7.1. Բողոքաբերը նշել է, որ դատապարտյալի կողմից դատարան համապատասխան միջնորդություն ներկայացնելու կամ պրոբացիայի ծառայություն համապատասխան դիմում ներկայացնելու մասին քրեակատարողական օրենսդրությամբ նախատեսված իրավակարգավորումները վերաբերելի են տուգանքը վճարելու անհնարինության դեպքերին, իսկ տուգանքը վճարելուց խուսափելու դեպքում պրոբացիայի ծառայության կողմից ներկայացվում է համապատասխան միջնորդություն՝ դատապարտյալի նկատմամբ նշանակված տուգանքի չափին համարժեք գույք բռնագանձելու, կամ

տուգանքը ազատազրկմամբ փոխարինելու վերաբերյալ, որի դեպքում՝ դատապարտյալի դիմում կամ այլ կերպ՝ համաձայնություն ստանալու ընթացակարգեր նախատեսված չեն:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ բողոքաբերն արձանագրել է, որ ստորադաս դատարանների այն պնդումները, որ տվյալ դեպքում պրոբացիայի ծառայությունն օժտված չէ տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինելու միջնորդություն ներկայացնելու իրավազորությամբ, ընդունելի չի կարող համարվել, քանի որ տուգանքը վճարելուց խուսափելու դեպքում միակ իրավասու մարմինը՝ համապատասխան միջնորդություն դատարան ներկայացնելու համար, հանդիսանում է պրոբացիայի ծառայությունը:

7.2. Անդրադառնալով ստորադաս դատարանների այն պնդումներին, որ քննարկվող դեպքի և Վճռաբեկ դատարանի՝ *Գարուն Ասրյանի* վերաբերյալ որոշման կայացման հիմք հանդիսացած գործի փաստական հանգամանքները տարբեր են, մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանի համապատասխան իրավական դիրքորոշումը վերաբերելի է մինչև նոր օրենսդրության ընդունումը ծագած իրավահարաբերություններին՝ ՀՀ նախկին քրեակատարողական օրենսգրքի կարգավորումների շրջանակներում սկսված և նոր օրենսդրական կարգավորումների գործողության պայմաններում իրականացված գործընթացին, ապա հարկ է փաստել, որ վերոնշյալ որոշմամբ Վճռաբեկ դատարանը հստակ ամրագրել է, որ մինչև գործող քրեական օրենսգիրքն ուժի մեջ մտնելը կատարված արարքների դեպքում, եթե դատապարտյալը խուսափում է իր նկատմամբ նշանակված տուգանքը վճարելուց, դատարանը համապատասխան միջնորդության քննարկման արդյունքում պետք է տուգանքի չափին համարժեք գույք բռնագանձելու վերաբերյալ դատական ակտ կայացնի, իսկ համապատասխան գույքի բացակայության դեպքում միայն նշանակված տուգանքը կարող է փոխարինվել հանրային աշխատանքներով՝ նախկին դատավարական ընթացակարգերին համապատասխան:

8. Արդյունքում՝ բողոքաբերը խնդրել է Առաջին ատյանի դատարանի՝ 2025 թվականի հուլիսի 28-ի որոշումն անփոփոխ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2026 թվականի փետրվարի 13-ի որոշումը բեկանել՝ կայացնելով նոր դատական ակտ՝ ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության Արարատի մարզային մարմնի պետի միջնորդությունը՝ Ս.Ղազարյանի նկատմամբ Արարատի և Վայոց ձորի

մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2023 թվականի օգոստոսի 10-ի թիվ ԱՎԴ/0016/01/23 դատավճռով նշանակված 544.000 (հինգ հարյուր քառասունչորս հազար) ՀՀ դրամ տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինելու մասին, բավարարել:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

9. Առաջին ատյանի դատարանն իր որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Դատարանը փաստում է, որ ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության և դատապարտյալի միջև իրավահարաբերությունները ծագել են ընդունված նոր օրենսդրության գործողության պայմաններում, մասնավորապես «Հաշվառման վերցնելու և իրավունքներն ու պարտականությունները բացատրելու մասին» Չև 3 արձանագրությունը ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության Արարատի մարզային մարմնում կազմվել է 2023 թվականի նոյեմբերի 9-ին, այսինքն դատավճռով նշանակված տուգանքի կատարման նպատակով դատապարտյալը ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության Արարատի մարզային մարմնում վերցվել է հաշվառման արդեն իսկ 2022 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 26-րդ հոդվածով սահմանված կարգավորմանը համաձայն: Հետևաբար Պրոբացիայի ծառայությունն օժտված չէ միջնորդելու տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինելու իրավազորությամբ, եթե առկա չէ հանրային աշխատանքներ կատարելու վերաբերյալ Պրոբացիայի ծառայությանն ուղղված դատապարտյալի համապատասխան միջնորդությունը: Ինչ վերաբերում է միջնորդությամբ Վճռաբեկ դատարանի 30.06.2023թ. թիվ ՍԴ/0006/13/22 որոշման վկայակոչմանը, ապա Դատարանի գնահատմամբ քննարկվող դեպքի և Վճռաբեկ դատարանի հիշյալ որոշման կայացման համար հիմք հանդիսացած գործի փաստական հանգամանքները տարբեր են, մասնավորապես Վճռաբեկ դատարանի համապատասխան իրավական դիրքորոշումը վերաբերելի է մինչև նոր օրենսդրության ընդունումը ծագած իրավահարաբերություններին՝ ՀՀ նախկին քրեակատարողական օրենսգրքի կարգավորումների շրջանակներում դատապարտյալի նկատմամբ սկսված և*

նոր օրենսդրական կարգավորումների գործողության պայմաններում իրականացված գործընթացին:

Նշվածի հիման վրա Դատարանը գտնում է, որ ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության Արարատի մարզային մարմնի պետի միջնորդությունը՝ Սեդրակ Փայլակի Ղազարյանի նկատմամբ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 10.08.2023թ. թիվ ԱՎԴ/0016/01/23 դատավճռով նշանակված 544.000 (հինգ հարյուր քառասունչորս հազար) ՀՀ դրամ տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինելու վերաբերյալ, պետք է մերժել: (...)»[1]:

10. Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(...) Վերաքննիչ դատարանը ևս գտնում է, որ պրոբացիայի ծառայությունն օժտված չէ միջնորդելու տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինելու իրավազորությամբ, եթե առկա չէ հանրային աշխատանքներ կատարելու վերաբերյալ Պրոբացիայի ծառայությանն ուղղված դատապարտյալի համապատասխան միջնորդությունը:*

Ինչ վերաբերում է միջնորդությամբ Վճռաբեկ դատարանի 30.06.2023թ. թիվ ՍԴ/0006/13/22 որոշման վկայակոչմանը, ապա Դատարանի իրավացի գնահատմամբ քննարկվող դեպքի և Վճռաբեկ դատարանի հիշյալ որոշման կայացման համար հիմք հանդիսացած գործի փաստական հանգամանքները տարբեր են, մասնավորապես Վճռաբեկ դատարանի համապատասխան իրավական դիրքորոշումը վերաբերելի է մինչև նոր օրենսդրության ընդունումը ծագած իրավահարաբերություններին՝ ՀՀ նախկին քրեակատարողական օրենսգրքի կարգավորումների շրջանակներում դատապարտյալի նկատմամբ սկսված և նոր օրենսդրական կարգավորումների գործողության պայմաններում իրականացված գործընթացին:

Նշվածի հիման վրա Դատարանը իրավացիորեն գտել է, որ ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության Արարատի մարզային մարմնի պետի միջնորդությունը՝ Սեդրակ Փայլակի Ղազարյանի նկատմամբ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 10.08.2023թ. թիվ ԱՎԴ/0016/01/23 դատավճռով նշանակված

[1] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 1, թերթեր 47-52:

544.000 (հինգ հարյուր քառասունչորս հազար) ՀՀ դրամ տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինելու վերաբերյալ, պետք է մերժել։ (...)»[2]։

Վճռաբեկ դատարանի հիմնավորումները և եզրահանգումը.

11. Սույն վարույթով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչա՞փ են արդյոք դատապարտյալ Ս.Ղազարյանի նկատմամբ նշանակված տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինելու մասին ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության միջնորդությունը մերժելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

12. Վճռաբեկ դատարանը, *Գարուն Ասրյանի* որոշմամբ արձանագրել է, որ ՀՀ գործող քրեական օրենսգրքով տուգանքը չվճարելու դեպքում օրենսդիրը նախատեսել է քննարկվող պատժատեսակի կատարումն ապահովող տարբեր մեխանիզմներ՝ պայմանավորված այն հանգամանքով՝ առկա է տուգանքը վճարելու անհնարինություն, թե խուսափում: Մասնավորապես, տուգանքը վճարելու ***անհնարինության*** դեպքում կա՛մ երկարաձգվում է դրա վճարման սահմանված վերջնաժամկետը՝ առավելագույնը մեկ տարով, կա՛մ նշանակվում են հանրային աշխատանքներ: Մինչդեռ, դատապարտյալի կողմից տուգանքը վճարելուց ***խուսափելու*** դեպքում օրենսդիրը, նախքան տուգանքն այլ պատժատեսակով փոխարինելը, նախատեսել է տուգանքի չափին ***համարժեք գույք բռնագանձելու հնարավորություն***, եթե այդպիսին առկա է: Գույքի բացակայության դեպքում տուգանքը փոխարինվում է ազատազրկմամբ՝ երեք օրը հաշվարկելով նվազագույն աշխատավարձի դիմաց:

Անդրադառնալով տուգանքի չափին համարժեք գույք բռնագանձելու ինստիտուտի էությանը՝ Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ այն նախևառաջ միտված է ապահովելու տուգանք պատժատեսակի պատշաճ կատարումը, ընդ որում՝ անձի իրավունքներին հնարավորինս նվազ միջամտությամբ: Այսպես՝ տուգանքի չափին համարժեք գույքի բռնագանձումն ***ինքնին պատժատեսակ չէ և ընդգրկված չէ*** քրեական օրենսդրությամբ սահմանված ***պատժի համակարգում, չունի պատժիչ բնույթ,*** քանի որ դրա միակ նպատակը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով նշանակված պատժի

[2] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 2, թերթեր 23-31:

կատարումն ապահովելն է: Այս համատեքստում Վճռաբեկ դատարանը հատկապես կարևորել է բռնագանձվող գույքի և տուգանքի չափի միջև համաչափության ապահովման՝ օրենսդրորեն ամրագրված երաշխիքը, ըստ որի՝ տուգանքը վճարելուց խուսափելու դեպքում բռնագանձվում է դատարանի որոշած տուգանքի չափին ***համարժեք*** գույք:

Քննարկվող ինստիտուտը դիտարկելով ՀՀ նախկին քրեական օրենսգրքով նախատեսված իրավակարգավորման համատեքստում, ըստ որի՝ տուգանքը վճարելուց խուսափելու դեպքում այն ***միանգամից փոխարինվում էր մեկ այլ պատժատեսակով՝ հանրային աշխատանքներով,*** Վճռաբեկ դատարանը փաստել է, որ բռնագանձման պարագայում պատժատեսակի փոփոխություն, որպես այդպիսին, տեղի չի ունենում: Այլ կերպ՝ նախքան չվճարված տուգանքն ավելի խիստ պատժատեսակով փոխարինելը, օրենսդրորեն նախատեսվել է ***միջանկյալ հնարավորություն՝ տուգանքի կատարումն ապահովող ինքնուրույն գործիք,*** որը թույլ է տալիս հասնելու դատարանի դատավճռով նշանակված պատժի կատարմանը՝ անձի իրավունքների համեմատաբար նվազ սահմանափակման արդյունքում:

Վերոշարադրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ տուգանքի չափին համարժեք գույք բռնագանձելու վերաբերյալ կատարված փոփոխությունն ըստ էության ***պատասխանատվությունը մասնակիորեն մեղմացնող է,*** քանի որ թույլ է տալիս տուգանքն անմիջաբար չփոխարինել ավելի խիստ պատժատեսակով: Հետևաբար, մինչև գործող քրեական օրենսգիրքն ուժի մեջ մտնելը կատարված արարքների դեպքում, եթե դատապարտյալը խուսափում է իր նկատմամբ նշանակված տուգանքը վճարելուց, դատարանը համապատասխան միջնորդության քննարկման արդյունքում պետք է տուգանքի չափին համարժեք գույք բռնագանձելու վերաբերյալ դատական ակտ կայացնի: Համապատասխան գույքի բացակայության դեպքում միայն նշանակված ***տուգանքը կարող է փոխարինվել հանրային աշխատանքներով՝*** նախկին դատավարական ընթացակարգերին համապատասխան, քանի որ գործող քրեական օրենսգրքի 59-րդ հոդվածի 11-րդ մասով սահմանված կարգավորումը՝ ***տուգանքի չափին համարժեք գույքի բացակայության դեպքում այն ազատազրկմամբ փոխարինելը***, անձի համար ըստ

էության պատասխանատվությունը մասնակիորեն խստացնող է, ուստի ***հետադարձ ուժ չի կարող ունենալ***[3]:

12.1. Վերոշարադրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանը փաստել է, որ տուգանքի չափին համարժեք գույքի բացակայության դեպքում այն պետք է փոխարինվի հանրային աշխատանքներով՝ նախկինում գործող դատավարական ընթացակարգերին համապատասխան[4]:

13. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Առաջին ատյանի դատարանը, Ս.Ղազարյանի նկատմամբ նշանակված տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինելու վերաբերյալ միջնորդության քննության արդյունքում, փաստելով, որ ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության և դատապարտյալի միջև իրավահարաբերությունները ծագել են ընդունված նոր օրենսդրության գործողության պայմաններում, այսինքն՝ դատավճռով նշանակված տուգանքի կատարման նպատակով դատապարտյալը վերցվել է հաշվառման 2022 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 26-րդ հոդվածով սահմանված կարգավորման համաձայն, հանգել է հետևության, որ պրոբացիայի ծառայությունն օժտված չէ տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինելու վերաբերյալ դատարան միջնորդություն ներկայացնելու իրավազորությամբ, եթե առկա չէ հանրային աշխատանքներ կատարելու վերաբերյալ պրոբացիայի ծառայությանն ուղղված դատապարտյալի համապատասխան միջնորդությունը:

Անդրադառնալով Վճռաբեկ դատարանի՝ *Գարուն Ասրյանի* գործով 2023 թվականի հունիսի 30-ի թիվ ՍԴ/0006/13/22 որոշման կիրառելիությանը, Առաջին ատյանի դատարանն արձանագրել է, որ դրանով արտահայտված իրավական դիրքորոշումը վերաբերելի է մինչև նոր օրենսդրության ընդունումը ծագած իրավահարաբերություններին՝ ՀՀ նախկին քրեակատարողական օրենսգրքի կարգավորումների շրջանակներում դատապարտյալի նկատմամբ սկսված և նոր

[3] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գարուն Ասրյանի* գործով 2023 թվականի հունիսի 30-ի թիվ ՍԴ/0006/13/22 որոշումը:

[4] Տե՛ս նույն որոշման 21-րդ կետը:

օրենսդրական կարգավորումների գործողության պայմաններում իրականացված գործընթացին:

Արդյունքում՝ ներկայացված միջնորդությունը Առաջին ատյանի դատարանի կողմից մերժվել է[5]:

- Վերաքննիչ դատարանը, նույնաբովանդակ հիմնավորումների վկայակոչմամբ, համաձայնել է Առաջին ատյանի դատարանի վերոնշյալ դիրքորոշման հետ և եզրահանգել, որ Առաջին ատյանի դատարանի՝ 2025 թվականի հուլիսի 28-ի որոշումը պետք է թողնել անփոփոխ, իսկ դատախազի հատուկ վերանայման վերաքննիչ բողոքը՝ մերժել[6]:

14. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 12-12.1-րդ կետերում վկայակոչված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները Ս.Ղազարյանի նկատմամբ նշանակված տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինելու վերաբերյալ՝ ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության միջնորդությունը մերժելով, հանգել են սխալ հետևությունների:

Նախևառաջ, անդրադառնալով ստորադաս դատարանների հետևությանն առ այն, որ Վճռաբեկ դատարանի՝ *Գարուն Ասրյանի* գործով արտահայտված իրավական դիրքորոշումը վերաբերելի է մինչև նոր օրենսդրության ընդունումը ծագած իրավահարաբերություններին՝ ՀՀ նախկին քրեակատարողական օրենսգրքի կարգավորումների շրջանակներում դատապարտյալի նկատմամբ սկսված և նոր օրենսդրական կարգավորումների գործողության պայմաններում իրականացված գործընթացին, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ վերոնշյալ նախադեպային որոշմամբ սահմանված՝ տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինելու գործիքակազմի կիրառելիության տեսանկյունից էական է դատապարտյալի կողմից ***հանցավոր արարքի կատարման պահը***, այլ ոչ թե դատապարտյալի և ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության համապատասխան ստորաբաժանման միջև իրավահարաբերությունների ծագման պահը:

[5] Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:
[6] Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

Սույն դեպքում, Ս.Ղազարյանը ՀՀ գործող քրեական օրենսգրքի 396-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցավոր արարքը կատարել է **2022 թվականի ապրիլի 14-ին**[7], այսինքն՝ մինչև գործող քրեական օրենսգիրքն ուժի մեջ մտնելը: Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն դեպքի առնչությամբ կիրառելի է Վճռաբեկ դատարանի՝ *Գարուն Ասրյանի* վերաբերյալ նախադեպային որոշմամբ սահմանված՝ տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինելու գործիքակազմը:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տուգանքի չափին համարժեք բռնագանձնման ենթակա՝ Ս.Ղազարյանին պատկանող գույքի բացակայության պայմաններում, այն պետք է փոխարինվի հանրային աշխատանքներով, քանի որ գործող քրեական օրենսգրքի 59-րդ հոդվածի 11-րդ մասով սահմանված կարգավորումը՝ տուգանքի չափին համարժեք գույքի բացակայության դեպքում այն ազատազրկմամբ փոխարինելը, անձի համար ըստ էության պատասխանատվությունը մասնակիորեն խստացնող է, ուստի հետադարձ ուժ չի կարող ունենալ:

Հետևաբար, սույն վարույթով ստորադաս դատարանները դատապարտյալի նկատմամբ նշանակված տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինելու վերաբերյալ համապատասխան միջնորդությունը լուծելիս պետք է առաջնորդվեին բացառապես ՀՀ նախկին քրեական օրենսգրքի իրավակարգավորումներով:

15. Անդրադառնալով ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության՝ Ս.Ղազարյանի նկատմամբ նշանակված տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու իրավազորությամբ օժտված չլինելու մասին ստորադաս դատարանների հետևություններին՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում վկայակոչել *Մովսես Այվազյանի* գործով արտահայտված իրավական դիրքորոշումն առ այն, որ դատապարտյալի կողմից **տուգանքը վճարելուց խուսափելու դեպքում** թե՛ նախկին, և թե՛ գործող քրեական օրենսգրքերը դատապարտյալի դիրքորոշումը հաշվի առնելու կամ նրա համաձայնությունը ստանալու պահանջ չեն սահմանում[8]: Հետևաբար, ՀՀ գործող

[7] Տե՛ս www.Datalex.am Դատական տեղեկատվական համակարգ, գործ թիվ ԱՎԴ/0016/01/23:
[8] Տե՛ս ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 51-րդ և ՀՀ գործող քրեական օրենսգրքի 59-րդ հոդվածները:

քրեական օրենսգրքի 59-րդ հոդվածը տվյալ դեպքում կիրառելի չէ, քանի որ այն վերաբերում է դատապարտյալի կողմից **տուգանքը վճարելու անհնարինության դեպքերին:** Վերոգրյալի հաշվառմամբ, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ մինչև գործող քրեական օրենսգիրքն ուժի մեջ մտնելը կատարված արարքների դեպքում, դատապարտյալի կողմից իր նկատմամբ նշանակված տուգանքը վճարելուց խուսափելիս դատարանը համապատասխան միջնորդությունը լուծում է՝ հիմք ընդունելով նախկին դատավարական ընթացակարգերը, որպիսի պայմաններում դատապարտյալի համաձայնության առկայության իմպերատիվ պահանջ նախատեսված չէ[9]:

16. Վերոշարադրյալ դատողությունների հիման վրա, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատապարտյալ Ս.Ղազարյանի նկատմամբ նշանակված տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինելու մասին ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության միջնորդությունը մերժելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևություններն իրավաչափ չեն:

17. Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ստորադաս դատարանները, սույն վարույթով դատական ակտ կայացնելիս, թույլ են տվել դատական սխալ՝ նյութական օրենքի ոչ ճիշտ կիրառում, այն է՝ սխալ են մեկնաբանել ՀՀ գործող քրեական օրենսգրքի 9-րդ, 59-րդ հոդվածները, ինչը, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 362-րդ հոդվածի՝ հիմք է Առաջին ատյանի դատարանի՝ 2025 թվականի հուլիսի 28-ի և այն անփոփոխ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2026 թվականի փետրվարի 13-ի որոշումները բեկանելու և վարույթը Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության փոխանցելու համար՝ սույն որոշմամբ արձանագրված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ համապատասխան որոշում կայացնելու նպատակով[10]:

18. Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով և Հայաստանի

---

[9] Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Մովսես Այվազյանի* գործով 2026 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ ԵԴ1/0308/13/25 որոշման 16-րդ և 17-րդ կետերը:

[10] Հատուկ վերանայման արդյունքում դատական ակտը բեկանելուց հետո Վճռաբեկ դատարանի կողմից վարույթը համապատասխան ստորադաս դատարան նոր քննության փոխանցելու լիազորության վերաբերյալ տե՛ս, Վճռաբեկ դատարանի՝ *Ավաթ Ամինի* վերաբերյալ 2023 թվականի հունվարի 25-ի թիվ ԵԴ/0752/06/22 որոշումը, կետ 17.1:

Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ, 33-րդ, 34-րդ, 264-րդ, 281-րդ, 352-րդ, 359-րդ, 361-363-րդ և 400-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

Դատապարտյալ Սեդրակ Փայլակի Ղազարյանի վերաբերյալ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2025 թվականի հուլիսի 28-ի որոշումը և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2026 թվականի փետրվարի 13-ի որոշումը բեկանել և վարույթը փոխանցել Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացնելու օրը:

Նախագահող՝ _____ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Դատավորներ՝ _____ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

_____ Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

_____ Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆ

_____ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

_____ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ